ԼՈՒՍԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԱՐՎԵՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՄ XX-XXI ԴԱՐԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v3i66.130

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացված է մոնումենտալ արվեստի դրսևորումները թանգարանների գեղարվեստական ձևավորման մեջ: Բերված են օրինակներ Հայաստանի թանգարանների ձևավորումներում մոնումենտալ արվեստի՝ հատկապես որմնանկարչության կիրառման վերաբերյալ: Տարված են զուգահեռներ Եվրոպական մի քանի թանգարանների ձևավորումների միջև: Ժամանակային սահմանները ընդգրկում են հիմնականում **XX** դարից մինչև մեր օրեր ընկած ժամանակահատվածը: Ուսումնասիրությունը նպատակ ունի ներկայացնելու մոնումենտալ արվեստի կիրառության բազմազանությունը և կարևորությունը հասարակական շենքերի՝ մասնավորապես թանգարանների գեղարվեստական ձևավորման մեջ: Կարևորելով այս արվեստի հետագա զարգացումը՝ հոդվածը կարող է օգտակար նյութ հանդիսանալ ուսումնասիրողների, արվեստաբանների և արվեստագետների համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. *մոնումենտալ արվեստ, թանգարան, ձևավորում, որմնանկար, խճանկար:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մոնումենտալ արվեստը, ունենալով տարածության հետ փոխազդեցության յուրահատուկ հատկություններ, ոչ միայն գեղարվեստական արտահայտման ձև է, այլև կարևոր գործիք միջավայրի կազմակերպման և վերափոխման համար: Մոնումենտալ արվեստը բնական կերպով ներգրավվում է ճարտարապետական տարածության մեջ և ստեղծում յուրահատուկ մթնոլորտ դիտորդի համար: Գեղագիտական, խորհրդանշական և գործնական գործոնները մոնումենտալ

արվեստը դարձնում են ուժեղ գործիք տարածական միջավայրի կազմակերպման մեջ: Մոնումենտալ արվեստը ճարտարապետական տարածական միջավայրի անբաժանելի մաս է, որից կախված է քաղաքի, շենքի, շինության ներքին կամ արտաքին կերպարը: Արվեստների սինթեզը ճարտարապետության մեջ ներկայացնում է տարբեր արվեստների տեսակների՝ նկարչության, քանդակագործության, դեկորատիվ-կիրառական արվեստի ներգրավումը ճարտարապետական միջավայրի մեջ, որի արդյունքում ձևավորվում է որակապես նոր գեղագիտական, պատկերային միասնություն: Այս գործընթացը չի սահմանափակվում տարբեր արվեստի գործերի մեխանիկական զուգակցմամբ մեկ ճարտարապետական օբյեկտի կամ համալիրի շրջանակներում, նույնիսկ եթե դրանք ստեղծվում են միաժամանակ: Իրական համադրման կարելի է հասնել գեղարվեստական բնական փոխազդեցության միջոցով, որտեղ յուրաքանչյուր բաղադրիչ ունի իր անկախ գեղագիտական արժեքը, իսկ դրանց համակցումը ստեղծում է արվեստի նոր համալիր՝ յուրահատուկ հատկություններով, որը դուրս է գալիս առանձին տարրերի անհատական հատկանիշներից՝ ստեղծելով սիներգիա: Ճարտարապետական միջավայրում կիրառված մոնումենտալ արվեստի դրսևորումները կամ կրում են որոշակի էներգետիկ լիցք էսթետիկ ազդեցություն՝ ձևավորելով բնակիչների էմոցիոնալ վիճակը, կամ սառը, անտարբեր և առանձնացված՝ շարունակում են իրենց գոյությունը՝ ստեղծելով անհատական միջավայր **(Прохоров С., 2012)**:

Այս արվեստը կարևոր դեր ունի հասարակության մշակութային, պատմական և գաղափարական դիմագծի ձևավորման գործում՝ արտահայտելով ժողովրդի անցյալն ու ներկան, արժեքներն ու հավատամքները: Հասարակական շենքերի գեղարվեստական ձևավորման մեջ մոնումենտալ արվեստն ընդգրկում է ճարտարապետական լուծումներ, որմնանկարներ, քանդակներ, խճանկարներ, վիտրաժներ և այլ գեղարվեստական ձևեր, որոնք ներդաշնակորեն միահյուսվում են միջավայրի ընդհանուր պատկերին: Այն ծառայում է ոչ միայն գեղագիտական

խնդիրների լուծմանը, այլև գործառական, սոցիալական, կրթական ու գաղափարական նպատակների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը կատարվել է հետևյալ թանգարանների այցելությամբ՝ Պարույր Սևակի տուն-թանգարան, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ, Կարեն Դեմիրճյանի թանգարան, Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, Գաֆեսճյան արվեստի կենտրոն, Վիեննայի արվեստի պատմության թանգարան, “Vitra” դիզայնի թանգարան, նաև հասանելի գիտական աղբյուրներից օգտվելով՝ միտք ունենալով կատարել մանրամասն հետազոտություն տվյալ ոլորտում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թանգարանները՝ որպես ազգային, մշակութային ժառանգության կենտրոններ, առանձնահատուկ դեր ունեն մոնումենտալ արվեստի պահպանման և ներկայացման գործում: Թանգարանները ոչ միայն ներկայացնում են հանրահայտ արվեստագետների կյանքն ու գործունեությունը, այլև հաճախ ներառում են մոնումենտալ արվեստի բացառիկ նմուշներ, որոնք իրենց հերթին խորհրդանշում են մշակութային գաղափարները: Այս տեսանկյունից դիտարկելով հայ մեծերի տուն-թանգարանները՝ օրինակ կարելի է բերել Արարատի մարզի Զանգակատուն գյուղում գտնվող Պարույր Սևակի տուն-թանգարանի ներքին միջավայրը ձևավորող ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ Սարգիս Մուրադյանի (1927-2007) 1985-1986թթ իրականացրած որմնանկարները, որտեղ ներկայացված են գրողի կյանքի և ստեղծագործության կարևոր շրջափուլերը: Թանգարանի գլխավոր սրահը երկարավուն ուղղանկյունանիստ տեսք ունի, որի մեկ ամբողջական պատին նկարված է որմնանկարը: Այն պատկերված է հատակից 50*սմ* բարձրության վրա՝ հաշվի առնելով, որ դիմացը կարող է դրվել սեղան կամ այլ գույք: Որմնանկարը արված է մոխրագույն և կապտավուն երանգներով, տեղ-տեղ նաև առկա են տաք դարչնագույն երանգներ: Որմնանակրում

ամբողջությամբ արտահայտված են Պարույր Սևակի կյանքի դրվագները և այն տրամադրությունը ու զգացողությունները, որը բանաստեղծը փոխանցում է իր ստեղծագործություններում: Այս որմնանկարը հիանալի կերպով արտահայտում է թանգարանի գործառույթը և ներկայացնում Պարույր Սևակի կյանքը և գործունեությունը՝ դառնալով միջավայրի ձևավորման կարևոր և անփոխարինելի մաս:

Մոնումենտալ արվեստի դրսևորումներից համարվում են նաև պանոները, որոնք մոնումենտալ արվեստի ինքնատիպ ձևերից են, որոնք արտահայտվում են մեծածավալ մակերեսների գեղարվեստական ձևավորման միջոցով: Այն համադրում է գեղանկարչության, գրաֆիկայի, խեցեգործության, երբեմն ճարտարապետության տարրերը՝ ստեղծելով գաղափարական, գեղագիտական և տարածական ազդեցություն: Պանոն հիմնականում կիրառվում է հանրային շենքերի, մշակութային հաստատությունների և քաղաքային տարածքների ձևավորման համար՝ ներառելով հասարակական հիշողության, ազգային ինքնության և պատմական իրադարձությունների արտացոլումը, կամ կարող է կրել միայն գեղագիտական գործառույթ: Պանոների թեմատիկան հաճախ առնչվում է հերոսական պատումներին, ազգային մշակույթին և կոլեկտիվ արժեքներին, ինչը այն դարձնում է ոչ միայն գեղարվեստական, այլև քարոզչական ու կրթական կարևոր միջոց: Այս ձևաչափը նպաստում է հասարակության մեջ գաղափարների հաղորդմանը՝ միաժամանակ հարստացնելով միջավայրը գեղագիտական տեսանկյունից:

Մոնումենտալ պանոյի բարձրարժեք օրինակ է Հայաստանի վաստակավոր նկարիչ Ռուբեն Ղևոնդյանի (1942-2019) «Անի քաղաքի համայնապատկերի վերականգնումը» պանոն, որը իրականացվել է 2005-2010թթ., չափսը՝ 500x300*սմ*, նյութը՝ կտավ, յուղաներկ, գտնվում է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում **(Հակոբյան Թ., 1988):** Նկարիչը երկար տարիներ ուսումնասիրել էր Անի քաղաքի եկեղեցիների, շինությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը, մարդկանց

հագուստների, զինանշանների և քաղաքի արտաքին տեսքի վերաբերյալ նյութերը, պատրաստել էր եկեղեցիների ստվարաթղթե մանրակերտները, որպեսզի կարողանա ճշգրտորեն եռաչափ կառուցմամբ վերարտադրել այն կտավի վրա: Պանոյի էսքիզը և եկեղեցիների մանրակերտները նույնպես գտնվում են Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում: Պատկերված է Ախուրյան գետը, Սմբատաշենի պարիսպը և պարսպի ներսում տեղակայված մայրաքաղաքը՝ իր եկեղեցիներով, մատուռներով, տներով: Վերապատկերված է նաև Անի մայրաքաղաքի զինանշանը, կենտրոնում՝ առյուծը, կողքերում՝ երաժշտական և զիվորական գործիքներ, գծագրական կարկին, պատկերված է կշեռք, որի նժարներից մեկի վրա ոսկի է, մյուսին՝ գիրք, ամենայն հավանականությամբ Ավետարանը, գիրքը ավելի ներքևում է, ավելի ծանր կշիռ ունի քան ոսկիով լի նժարը: Զինանշանի ձախ կողմում կարելի է նկատել հեղինակի անվան և ազգանվան առաջին տառերը, որը հանդիպում է նրա այլ որմնանկարներում ևս: Պանոն բոլոր կողմերից կարծես շրջանակված լինի. աջ և ձախ կողմերում պատկերված են զարդաքանդակներ, վերևում գրված է՝ ԱՐԵՎԵԼԵԱՆ ՔԱՂԱՔԴ ԱՆԻ ԵՐԲԵՄՆ ԵՎ ԴՈՒ ԷԻՐ ՎԱՅԵԼՉԱԿԱՆ ՀԱՐՍՆԻՔՈՂԻ ՄԵՐՁԱՎՈՐԱՑ ՅՈՅԺ ՑԱՆԿԱԼԻ ՀԵՌԱՎՈՐԱՑ ՓԱՓԱԳԵԼԻ, ներքևում գրված է՝ ՈՒՐ ԵՆ ԽՆԿՈՑՆ Ի ՔԵԶ ԲՈՒՐՄՈՒՆՔ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ԵՎ ԵՐԵՎԵԼԻ ԿԱՄ ԺՈՂՈՎՈՑՆ ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՅԱՎՈՒՐ ՏՕՆԻՑՆ ՏԵՐՈՒՆԻ: Կենտրոնում պատկերված է քաղաքի մուտքը և մարդկանց բազմություն, տոնախմբություն՝ մրգերով լի զամբյուղներով, երաժշտությամբ, երգով և նվագով, պատկերված է Գագիկ Ա Բագրատունին, կինը՝ Կատրանիդեն, դիմացը՝ Անիի Մայր տաճարի մանրակերտը, կողքին՝ Սահակ Ա Սևանցի կաթողիկոսը: Այստեղ պատկերված որոշ կերպարներ կարելի է տեսնել նաև Ռ. Ղևոնդյանի Երևան հյուրանոցի դահլիճի առաստաղի որմնանկարներում: Հեղինակն իր այս աշխատանքը նվիրել է Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտին, և պանոյի վերին աջ անկյունում կարել է նկատել գրություն՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՀԱՅ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼՆԵՐԻ ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ ՆԿԱՐԵՑ ՌՈՒԲԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆԸ 2005-2010ԹԹ: Հետաքրքրական է, որ Ռ. Ղևոնդյանը, մասնագիտությամբ լինելով նկարիչ, վարպետորեն կատարել է այս բարդ, ճարտարապետական գիտելիքներ պահանջող աշխատանքը, և նրա ձեռագիրը յուրահատուկ է և առանձնացող:

Թանգարանային որմնանկարի օրինակ է նաև Կարեն Դեմիրճյանի թանգարանի հիմնական սրահի որմնանկարը, որն իրականացրել է Հայաստանի վաստակավոր ճարտարապետ, նկարիչ, քանդակագործ Ալբերտ Սոխիկյանը (1947-2017) 2002թ.: Որմնանկարում վարպետորեն միահյուսված են Երևան քաղաքի այն կարևոր կառույցներն ու համալիրները, որոնք կառուցվել և շահագործման են հանձնվել Կարեն Դեմիրճյանի ղեկավարման տարիներին և որոշ կառույցներ էլ կրում են նրա անունը: Պատկերված է Զվարթնոց միջազգային օդանավակայանը, որի հետին պլանում գծային կատարմամբ կանգնած է Զվարթնոցի տաճարը, երևում է Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի շենքը, Երիտասարդական պալատը, Կարեն Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի Երիտասարդական կայարանի շինության արտաքին հատվածը, կենտրոնում պատկերված է Կարեն Դեմիրճյանի դիմանկարը, հետևում՝ Արարատ լեռը: Որմնանկարի գունային համադրությունը ևս հետաքրքրական է. այն իրենից ներկայացնում է ընդհանուր գունային անցում՝ կապույտից դեպի բաց կանաչակապտավուն երանգներ, առկա են նաև մարմնագույն և շագանակագույն տոներ: Որմնանկարը իրականացված է հետաքրքիր երկրաչափական ոճավորմամբ: Չնայած նրան, որ պատկերված են մի քանի կառույցներ, դրանք չեն խանգարում և չեն ծանրացնում որմնանկարի տեսքը, քանի որ միահյուսվում են միմյանց և իրականացված են բաց տոներով և գծային գրաֆիկայով: Կ. Դեմիրճյանի դիմանկարը կատարված է առավել շեշտադրմամբ և ակադեմիական նկարվածքով: Որմնանկարը ամբողջությամբ փոխանցում է մեծ քաղաքական գործչի ներդրումը հայրենաշինության գործում:

Մեկ այլ նման օրինակ է Երևանում Խաչատուր Աբովյանի տուն-թանգարանում գտնվող ԽՍՀՄ վաստակավոր նկարիչ Միհրան Սոսոյանի (1928-1992) 1987թ. իրականացած «Աբովյանը և Պարոտը» մոնումենտալ խճանկարը: Խճանկարի չափսը 150x210*սմ,* իրականացված է ֆլորենտական խճանկարի տեխնիկայով, նյութը՝ հայկական տուֆ և ֆելզիտ: Այս խճանկարը որոշակի առումով Մ. Սոսոյանի «Հայոց մեծերը» խճանկարների շարքի տրամաբանական շարունակությունն էր, որը պատրաստած էր 1985թ. Մոսկվայի գրքի միջազգային ցուցահանդեսի հայկական տաղավարի ձևավորման համար **(Սոսոյան Տ., 2003)**: Այն իրականացված է ֆլորենտական խճանկարի տեխնիկայով **(Прыгов В., 2019)**: Խճանկարների շարքը այժմ գտնվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի առաջին հարկի սրարհում: Խճանկարների իրակացման աշխատանքներին նաև մասնակից է եղել հեղինակի մտերիմ ընկերը՝ գեղանկարիչ Գրիգոր Խանաղյանը: Օգտագործված են հայկական տուֆ և ֆելզիտ: Խճանկարների շարքը բաղկացած է տասներեք աշխատանքից, որոնցից չափերով մեծը՝ Մեսրոպ Մաշտոցի խճանկարն է՝ 200x200*սմ*, մնացած խճանկարների չափերը նույնն են՝ 100x200*սմ*: Շարքում ներկայացված են հետևյալ հայ մեծերը՝ Մեսրոպ Մաշտոց, Գրիգոր Լուսավորիչ, Անանիա Շիրակացի, Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Եղիշե, Մխիթար Հերացի, Հակոբ Մեղապարտ, Թորոս Ռոսլին, Խաչատուր Աբովյան, Կոմիտաս, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց:

Թանգարանի ձևավորման ևս մեկ օրինակ է «Հայաստան» խճանկարը Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի ճակատամասին, էսքիզը՝ Մարտիրոս Սարյանի[1], իրականացրել է ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Գարրի (Գառնիկ) Սմբատյանը (1929-2003), 1967թ. (համահեղինակներ՝ Հարություն (Հատիկ) Պողոսյան, Զարզանդ Հարությունյան (1929-1993)) **(Գրիգորյան Ս., 2018)**: Գարրի (Գառնիկ) Սմբատյանը Լենինգրադի մոնումենտալ գեղանկարչության դպրոցի

[1] Մ. Սարյանի թանգարանի պաշտոնական կայքում գրված է, որ խճանկարը կատարված է Մ. Սարյանի էսքիզով, http://sarian.am/index.html (վերջին այցելություն 22.12.2024):

վառ ներկայացուցիչներից մեկն է Հայաստանում: Նրա մոնումենտալ խճանկարները, որմնանկարները, ինչպես նաև բազմաթիվ յուղանկարներ հավաստում են, որ նա բազմաժանր նկարիչ է, որը վարպետորեն ստեղծագործել է տարբեր ոճերում: Սմբատյանի ստեղծագործությունը կարևոր ներդրում է հայկական մոնումենտալ գեղանկարչության և խճանկարի զարգացման պատմության մեջ: Նա եղել է մոնումենտալ արվեստի հիմնադիրը Հայաստանում, հենց այդ պատճառով նրա աշխատանքներում բավականին մեծ տեղ են զբաղեցնում խճանկարները: Նկարիչը ստեղծել է մի շարք հիշարժան գործեր Հայաստանի տարբեր քաղաքներում: Գարրի (Գառնիկ) Սմբատյանը հեղինակ է մի շարք այլ մոնումենտալ աշխատանքների, որոնցից են Ստեփանավանում՝ «Արգիշտին որսի ժամանակ», Գյումրիում՝ «Գյումրվա հարսանիք» (ավերվել է 1988 թ. երկրաշարժից), Սևանում՝ «Աստղիկի ծնունդը» խճանկարների հեղինակն է: Աշխատանքների մոնումենտալությունը, տաք և սառը գույների զուգորդումը յուրահատուկ դինամիկություն և թեթևություն են հաղորդում **(Գրիգորյան Ս., 2018)**:

Դիտարկելով միջազգային հանրահայտ թանգարանները՝ կարելի է նկատել, որ որոշ թանգարաններում մոնումենտալ արվեստի ձևավորումներն առավել ցայտուն դրսևորումներ ունեն. դրանցից կարելի է առանձնացնել Վիեննայի արվեստի պատմության թանգարանը, որտեղ ամբողջ ներքին միջավայրը ձևավորված են որմնանկարներով և զարդաքանդակներով: Եթե համեմատենք այն Հայաստանի ազգային պատկերասրահի հետ, ապա կտեսնենք, որ Հայաստանի ազգային պատկերասրահում միջավայրի ձևավորումը առավել զուսպ է՝ առավելություն տալով հենց ցուցադրություններին: Առկա են սրահների գունային լուծումներ և տեղեկատվական տարրերի անմիջական տպագրություն պատերի մակերևույթներին, որոնք ևս կարող ենք համարել որմնանկարային գրաֆիկա: Վիեննայի արվեստի պատմության թանգարանի ներքին միջավայրի ձևավորման մեջ, հատկապես նախասրահների և առաջին հարկից երկրորդ հարկ տանող սանդուղքների դիմացի պատերի հատվածներում, կարելի է տեսնել

ականավոր ավստրիացի և եվրոպացի արվեստագետների ստեղծած որմնանկարներ և հարթաքանդակներ: Որմնանկարների հեղինակներից են **Գուստավ Կլիմտը**, նրա եղբայր **Էրնստ Կլիմտը** և նրանց գործընկեր **Ֆրանց Մատշը (Kerrigan M., 2015, Rychlik O., 2007)**: Եռյակը հանձն առավ թանգարանի գլխավոր աստիճանավանդակի և այլ ներքին տարածքների դեկորատիվ նկարազարդման աշխատանքը 1890-1891թթ: Դրանք պատկերում են տարբեր ժամանակաշրջանների և մշակույթների, այդ թվում՝ հին Եգիպտոսի, Հունաստանի, Իտալիայի և Միջնադարյան Եվրոպայի արվեստի դրվագներ: Կլիմտի աշխատանքները կենտրոնանում են առավելապես կերպարային և ոճային պարզության վրա, որոնք հարստացնում են թանգարանի միջավայրը: Այս որմնանկարները Կլիմտի կարիերայի վաղ շրջանի աշխատանքներից են՝ մինչ նա կզարգացներ իր խորհրդանշական ու բնորոշիչ ոճը, սակայն այստեղ ևս հեշտությամբ առանձնանում է նկարչի ձեռագիրը: Այս որմնանկարները նշանակալի են, քանի որ արտացոլում են Կլիմտի կարիերայի անցումային փուլը՝ ավանդական ակադեմիական արվեստից դեպի նրա նորարար, խորհրդանշական և զարդարուն ոճը, որով նա դարձավ աշխարհահռչակ: Կենտրոնական սանդուղքների կողապատերը զարդարված են սյունաշարով: Որմնանկարները հիմնականում արված են առաստաղի և գմբեթի հատվածներում, որոնք ներկայացնում են ալեգորիաներ՝ արվեստի, գիտության և մարդկային ստեղծագործականության թեմաներով: Որմնանկարներն արվել են դասական ոճով՝ արտացոլելով թանգարանի ճարտարապետական շքեղությունը, որը նախագծել են **Գոտֆրիդ Զեմպերը** և **Կարլ ֆոն Հազենաուերը (Mallgrave H., 2001, O'Hara J., 2013)**: Գմբեթի հատվածի որմնանկարները պատկերում են աստվածություններ, արքայական կերպարներ և մշակութային գործիչներ: Կերպարներից զատ՝ ամբողջ առաստաղը և պատերը պատված են զարդապատկերներով: Գմբեթը համարվում է ողջ շենքի կենտրոնական գեղարվեստական շեշտադրումը: Թանգարանի արտաքին և ներքին հատվածներում առկա են բազմազան հարթաքանդակներ: Դրանցից շատերը

պատկերում են հռոմեական դիցաբանության և պատմության թեմաներ, ինչպիսիք են Մուսաները, Ապոլլոնը, Հռոմեական հերոսներն ու փիլիսոփաները: Հարթաքանդակների հիմնական նպատակն է գեղագիտական կապ հաստատել շենքի ճարտարապետական ձևերի և թանգարանի հավաքածուների միջև՝ ընդգծելով թանգարանի մշակութային հարստությունը:

Յուրահատուկ են նաև թանգարանի հունահռոմեական արվեստի նմուշների և եգիպտական արվեստի սրահների որմնանկարային ձևավորումը: Յուրաքանչյուրն արված են իր ժամանակաշրջանի և տարածաշրջանի արվեստի և մշակույթի բնորոշ ոճավորմամբ և թեմատիկայով: Թանգարանի որմնանկարներն ու հարթաքանդակները ոչ միայն գեղարվեստական, այլև պատմական արժեք ունեն: Դրանք խորհրդանշում են 19-րդ դարի եվրոպական արվեստի բարձրագույն նվաճումները: Ժամանակի ընթացքում այս արվեստի գործերը պարբերաբար վերականգնվում են՝ պահպանելու դրանց գույնն ու մանրամասները: Այս պարագայում կարելի է ասել որ թանգարանի ձևավորումը արվեստի ստեղծագործություն է:

Վիեննայի Արվեստի պատմության թանգարանի որմնանկարներն ու հարթաքանդակները կարևոր են նաև 21-րդ դարի մշակութային զարգացման համար, քանի որ դրանք ներշնչանք են ինչպես այցելուների, այնպես էլ ժամանակակից արվեստագետների համար:

Ժամանակակից թանգարանային ձևավորումներում մոնումենտալ գեղանկարչությունը ևս իր տեղն ունի: Ժամանակակից միջազգային օրինակներից ուսումնասիրվել է Գերմանիայի՝ Վայլ ամ Ռայն քաղաքում գտնվող “Vitra” դիզայնի թանգարանի գեղարվեստական ձևավորումը: Թանգարանը բաղկացած է տարբեր մասնաշենքերից, և յուրաքանչյուր մասնաշենքի ներքին ձևավորումը իրականացվել են որմնանկարային յուրօրինակ նկարազարդումներով: Նկարազարդումները արված են ձեռքով, ունեն որոշակի մանկական ձեռագիր, հիշեցնում են գունավոր իլյուստրացիաներ, այս ոճը և նկարազարդումների թեմատիկան փոխանցում են թեթևության զգացողություն և

հիանալի կերպով ներգրավվում են միջավայրում: Նկարազարդումները տեղ-տեղ գծային են, տեղ-տեղ գունավորված, իրականացված են ակրիլային ներկերով: Այս նկարազարդումները միջավայրի գեղարվեստական ձևավորման մեջ ժամանակակից աշխարհում որմնանկարչության նորովի մատուցման հիանալի օրինակ են: Եթե զուգահեռենք այն Գաֆեսճյան արվեստի կենտրոնի ցուցասրահների հետ, ապա այստեղ մոնումենտալ արվեստը ներկայանում ոչ թե որպես ձևավորում, այլ հենց ցուցադրություն, որն ունի ազդեցիկ ընկալում, գեղագիտական, մշակութային նշանակություն: Դրանիցից են գեղարվեստական բարձր արժեք ունեցող Գրիգոր Խանջյանի (1926-2000) «Հայոց այբուբեն», «Վարդանանք», «Վերածնունդ» եռամաս որմնանկարները, Հակոբ Կոջոյանի (1883-1959) «Սասունցի Դավիթ» ստեղծագործության հիման վրա Արտաշես Հովսեփյանի որմնաքանդակը: Այս դրսևորումը, իհարկե, միջավայրի ձևավորում չի համարվում, այն մոնումենտալ ստեղծագործության ցուցադրություն է, որը նաև ձևավորում է սրահի միջավայրը:

Հետաքրքրական դրսևորում է նաև «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում Վան Խաչատուրի (Վանիկ Խաչատրյան (1926-2019)) կողմից արված ՀՀ Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ համարվող «Վարդանանք» խճանկարը (1956-1960) և «Հայ մշակույթի պատմություն»՝ եռամաս որմնանկարները (1956): Այս ձևավորումը առանձնահատուկ է նրանով, որ ի սկզբանե այն իրականացվել է միջավայրի ներքին հարդարման նպատակով, բայց ժամանակի ընթացքում վերածվել է առանձին արվեստի ստեղծագործությունների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել, որ մոնումենտալ արվեստի կիրառությունը թանգարաններում միավորում է արվեստի տարբեր տեսակներ՝ որմնանկարչություն, խճանկարչություն, քանդակ, և այլն, որոնք ինտեգրվում են ճարտարապետական միջավայր և ստեղծում միասնական, ուժեղ գեղագիտական ու գաղափարական ազդեցություն: Այն նաև

ծառայում է կրթական ու գաղափարական նպատակներին, հատկապես հանրության մեջ մշակութային արժեքների ու պատմական հիշողության պահպանմանը: Թանգարանների միջավայրի ձևավորման մեջ մոնումենտալ արվեստի կիրառումը ընդգծում են մեր մշակութային ժառանգությունը և պատմությունը՝ դրանք դարձնելով տպավորիչ և ուսուցողական: Մոնումենտալ արվեստի միջոցով թանգարանների ձևավորումը նաև հետաքրքրական միաձուլում է. մի կողմից այն միջավայրի ձևավորում է, մյուս կողմից կարող է դառնալ արվեստագետի գլուխգործոց, որն էլ այցելուին փոխանցում է կրկնակի տպավորություններ և գեղագիտական հաճույք: Որոշ օրինակներ փաստում են այն մասին, որ մոնումենտալ արվեստի ստեղծագործությունները թանգարանի գեղարվեստական ձևավորման մեջ կարող են հանդես գալ նաև որպես առանձին արվեստի ստեղծագործություն: Սակայն հարկ է նշել, որ եթե թանգարանը դադարի գործել և այդ տարածքում գործունեություն ծավալի այլ կազմակերպություն, ապա վտանգը մեծ է, որ թանգարանում առկա մոնումենտալ ստեղծագործության լինելիությունը կլինի վտանգված, քանի որ այդ ձևավորումները արտահայտում են թանգարանի կամ տուն-թանգարանի բուն գործունեությունը: Այսպիսով, թանգարանային ձևավորումներում առկա մոնումենտալ արվեստի աշխատանքները խոցելի են հետագա պահպանման տեսանկյունից, և կարիք կա մշակել որոշակի ընթացակարգ, ինչպես այլ, այնպես էլ թանգարանային գեղարվեստական ձևավորումներում առկա մոնումենտալ արվեստի ստեղծագործությունների հետագա պահպանման համար թանգարանի գործունեության դադարի դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Ս. (2018)**, Խճանկարը խորհրդային Հայաստանում, «Կանթեղ» գիտական հանդես, N 3(76), էջ 158-165:
2. **Հակոբյան Թ. (1988),** Անի մայրաքաղաք, Երևան, ԵՊՀ հրատ.:

3. **Սոսոյան Տ. (2003),** Միհրան Ռուբենի Սոսոյան, Աշխատանքների կատալոգ՝ գրքերի նկարազարդումներ, գեղանկար, գրաֆիկա, խճանկար, Երևան, Առերեսում - Անի, էջ 87-94:
4. **Прохоров С. (2012)**, Проблема синтеза искусств в архитектуре, Мир науки, культуры, образования. № 5 (36), с. 224 – 226.
5. **Прыгов В., Беляков А. (2019),** Истоки, развитие и расцвет флорентийской мозаики в Западной Европе, Природа, N 12, с. 32-40.
6. **Kerrigan M. (2015),** Gustav Klimt: Art Nouveau and the Vienna Secessionists (Masterworks), Flame Tree Illustrated.
7. **Mallgrave H. (2001),** Gottfried Semper. Ein Architekt des, N 19, pp. 74-129.
8. **O'Hara J. (2013),** A visit to the Vienna Museum with a brief history of the tachinid collection, The Tachinid Times, N 26, pp. 30-38.
9. **Rychlik O. (2007),** Gustav Klimt, Franz Matsch und Ernst Klimt im Burgtheater, Kunst-Agentur, N 4 , p. 111.
10. Մ. Սարյանի թանգարանի պաշտոնական կայք էջ, http://sarian.am/index.html (վերջին այցելություն 22.12.2024):

REFERENCES

1. **Grigoryan S. (2018)**, Xtwankary' xorhrdayin Hayastanowm /Mosaic Art in Soviet Armenia/, "Kantegh" Scientific Journal, N 3(76), pp. 158-165:
2. **Hakobyan T. (1988)**, Ani mayraqaghaq /Ani Capital/, Yerevan, YSU ed..
3. **Sosoyan T. (2003), Mihran Ruben Sosoyan, Catalog of Works**: Book Illustrations, Painting, Graphics, Mosaic, Yerevan, **Confrontation – Ani,** pp. 87-94:
4. **Prokhorov S. (2012),** Problema sinteza iskusstv v arkhitekture /**The Problem of the Synthesis of Arts in Architecture**/, *World of Science, Culture, Education,* № 5 (36), pp. 224 – 226.

5. **Prygov V., Belyakov A. (2019),** Istoki, razvitiye i rastsvet florentiyskoy mozaiki v Zapadnoy Yevrope /**Origins, Development, and Flourishing of Florentine Mosaic in Western Europe**/, *Nature*, N 12, pp. 32-40.
6. **Kerrigan M. (2015),** Gustav Klimt: Art Nouveau and the Vienna Secessionists (Masterworks), Flame Tree Illustrated, 192 p.
7. **Mallgrave H. (2001),** Gottfried Semper. Ein Architekt des, N 19, pp. 74-129.
8. **O'Hara J. (2013)**, A visit to the Vienna Museum with a brief history of the tachinid collection , The Tachinid Times, N 26, pp. 30-38.
9. **Rychlik O. (2007),** Gustav Klimt, Franz Matsch und Ernst Klimt im Burgtheater, Kunst-Agentur, N 4, p.111.
10. M. Saryani t'angarani pashtonakan kayq /Official Website Page of the Martiros Saryan/ Museum, http://sarian.am/index.html (last viewed 22.12.2024):

Лусине Петросян

Монументальное искусство в оформлении музеев в Армении в XX-XXI веках

Заключение

Ключевые слова и выражения: *Монументальное искусство, музей, оформление, фреска, мозаика.*

В результате проведенного исследования можно утверждать, что использование монументального искусства в музеях объединяет различные виды искусства — настенную роспись, мозаику, скульптуру и другие, которые интегрируются в архитектурную среду и создают единое, мощное эстетическое и идеологическое воздействие. Оно также служит образовательным и идеологическим целям, особенно в сохранении культурных ценностей и исторической памяти среди общественности. Применение монументального искусства в оформлении музейной среды подчеркивает наше культурное наследие и историю, делая их впечатляющими и познавательными. Оформление музеев с помощью монументального искусства также представляет собой интересное

сочетание: с одной стороны, оно формирует среду, с другой — может стать шедевром художника, что передает посетителю двойные впечатления и эстетическое наслаждение. Некоторые примеры свидетельствуют о том, что произведения монументального искусства в художественном оформлении музея могут также выступать в качестве самостоятельных произведений искусства. Однако следует отметить, что если музей прекратит свою деятельность и в этом помещении начнет функционировать другая организация, существует высокая вероятность того, что существование монументального произведения искусства в музее окажется под угрозой, так как эти оформления отражают саму деятельность музея или дома-музея. Таким образом, работы монументального искусства, присутствующие в музейных оформлениях, уязвимы с точки зрения их дальнейшего сохранения, и необходимо разработать определенный порядок по сохранению произведений монументального искусства в музейных и иных художественных оформлениях в случае прекращения деятельности музея.

Lusine Petrosyan

Monumental art in museum design

Conclusion

Keywords and expressions: *Monumental art, museum, design, mural, mosaic.*

As a result of the conducted research, it can be asserted that the use of monumental art in museums unites various art forms - mural, mosaic, sculpture, and others that integrate into the architectural environment and create a unified, powerful aesthetic and ideological impact. It also serves educational and ideological purposes, especially in the preservation of cultural values and historical memory among the public. The application of monumental art in museum design highlights our cultural heritage and history, making them impressive and educational. The design of museums through monumental art also represents an interesting fusion: on one hand, it shapes the environment, while on the other, it can become an artist's masterpiece, providing the visitor with a dual impression and aesthetic pleasure. Some examples indicate that monumental art pieces in the artistic design of a museum can also serve as independent works of art. However, it should be noted that if the museum ceases its activities and another organization starts operating in the same space, there is a high risk that the existence of the monumental artwork in the museum will be endangered, as these designs reflect the core activities of the museum or house-museum. Thus, monumental art pieces present in museum designs are vulnerable in terms of their future preservation, and it is necessary to develop a specific procedure for the preservation of monumental artworks in both museum and other artistic designs in the event of the museum's closure.

Լուսինե Պետրոսյան - Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի դիզայնի և դեկորատիվ կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոս, արվեստաբանության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ մոնումենտալ արվեստը (որմնանկարչություն, խճանկարչություն,) հասարակական շենքերի գեղարվեստական ձևավորման մեջ: Հեղինակ է 3 հոդվածի: Lus8990@gmail.com

Лусине Петросян - Преподаватель факультета дизайна и декоративно-прикладного искусства Государственной академии художеств Армении, аспирант кафедры искусствоведения. Научные интересы: Монументальное искусство

(настенная роспись, мозаика), в художественном оформлении общественных зданий. Автор 3 статей. Lus8990@gmail.com

Lusine Petrosyan - A lecturer at the faculty of Design and Decorative Applied Arts of the State Academy of Fine Arts of Armenia and a PhD student at the department of Art History. Her research interests include monumental art (mural, mosaic) in design of public buildings. She is the author of 3 articles. Lus8990@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 04.02.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.02.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.03.2025թ.